

**ԱՐՔՄԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ  
Բանասիրական գիտությունների թեկնածու**

**ԱՌԱԿԻ ԺԱՆՐԱՅԻՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ  
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ\***

**Բանալի բառեր՝** առակի ժամր, բանահյուսություն, զարգացման ձանապարհ, ժամրագիտություն, օրինաչափություններ, ժամրի ձևավորումը, համակարգված ընթանում, շրջափուլեր, կայուն հատկանիշներ, հայ գրականություն:

Առակի ժամրը, ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ գրականության ու բանահյուսության մեջ հին պատմություն ունի, անցել է զարգացման երկար ճանապարհ և դասվում է հնագույն ժանրերի շարքում: Գրերի գյուտից հետո այն արդեն իսկ հանդիպում է պատմագրության տարածքում: «Հատկապես՝ Փակստոս Բուզանդի «Հայոց պատմության» մեջ առկա են առակի փոքրածավալությամբ, պատումի սեղմությամբ, այլաբանական ընդգրկումներով, կուր ու նպատակավաց սյուժեով, խրատական բովանդակությամբ հատկանշվող հատվածներ: Առակի ժամրը հիշատակվում է նաև Ազարանգեղոսի «Հայոց պատմության» առաջին մասում՝ դեռևս հեթանոս Տրդատի մասին պատմվող առասպելների առիթով: Հետագայում նույնպես միջնադարյան արձակի տարաբնույթ հավաքածուներում ու որոշակի ընդհանրականությամբ հատկանշվող գրքերում առակը բազմիցս հիշատակվում է:

Այնուամենայնիվ, այսպիսի դեպքերում խոսել առակի ժամրի ավարտուն ներկայության ու դրսնորումների մասին, սխալ է, քանզի, ինչպես ցույց է տալիս պատմագրության պոետիկայի ուսումնասիրությունը, ցանկացած գրական ժամր, ներառվելով պատմագրության հյուսվածքում, անխուսափելիորեն փոխում է իր նկարագիրը: Հայտնի է, որ ինտերտեքստուալ հարաբերությունների առումով հայ պատմագրությունը ամենասերտ կապերն ու առնչակցությունները երևանում է Աստվածաշնչի հետ: Առակի առումով ևս այդ

\*Հոդվածն ընդունվել է 26.12.2016:

Հոդվածը տպագրության է երաշխավորել ՀՀ ԳԱԱ, Ս. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը:

հարաբերությունները մեծ կարևորություն են ստանում, քանզի Սուրբ Գրքի «Առակաց գիրքը» հաճախադեպ է ներբերվում ու վկայակոչվում հայ պատմիչների աշխատություններում: Հատկապես «Առակաց գրքի» արիթով էլ հանդիպում են առակի առաջին ժամանակակիցները մեզանում, որոնք վկայում են, որ առակի ժամանակակիցները բազմաթիվ են եղել: Պատահական չեն, որ ժամանը ներկայանում է տարակերպ ընկալումներով: Առակը ստանում է ժամանակակիցները ու հիմնավորումներ: Իհարկե, դրանք չի կարելի համարել ժամանի տեսաբանության հատուկ քննություններ, քանզի բացակայում է բուն ժամանակիտակցությունն ու ժամանակագողությունը: Բայց խնդրի բարդությունն այն է, որ ժամանի ժամանակակից, կարելի է ասել՝ բյուրեղացած ընկալումներով Սոլոմոնի ստեղծագործությունները ոչ թե առակներ են, այլ այս կամ այն գաղափարը հաստատող խրատներ, այլաբերական մտքեր: Նույնն է պարագան «Յաճախապատում» ձառերում առկա առակ կոչված ստեղծագործությունների դեպքում: Այս հանգամանքն ինքնին կարող է պատկերացում տալ ժամանի վերաբերյալ միջնադարյան պատկերացումների մասին:

Առակի բուն ժամանակիտակցությունն ու ժամանակակիությունների որոշակիորեն համակարգված ընթանումն առկա է 10-12-րդ դարերում՝ հայ գրականության մեջ Վերածնություն համարվող շրջանում: Այս ժամանակահատվածին են վերաբերում առակների՝ Մխիթար Գոշի ու Վարդան Այգեկցու կազմած ժողովածուները: Ուշարձանն այն է, որ ժամանի այս կիրառությունները լիովին համահունչ են Եվրոպական Վերածննդի ոգուն: Հայկական առակների մի մեծ խումբ ստեղծվել է անտիկ աշխարհի հայտնի առակագիր Եզոպոսի (մ.թ.ա. 6-րդ դար) ստեղծագործությունների նմանաբանությամբ: Թեպետ հոչակավոր այդ առակագրի անունը չի հիշատակվում մեր մատենագրության մեջ, սակայն նրա առակներից մի քանիսը ներբերվել են որոշ մատենագրական երկերում: Ավելին՝ 7-րդ տարում հայերեն են թարգմանվել Ոլիմպիանու առակները, որոնք ըստ Էության, Եզոպոսի առակներն են, բայց վերաշարադրված ձարտասանական ձևերի մեջ:

Այնուամենայնիվ, նույնիսկ ժամանի ամրագրման այս շրջանուն թյուրընկալումներ կրկին առկա էին: Մանավանդ որ՝ հատկապես Վարդան Այգեկցու կազմած ժողովածուներն էլ չեն հատկանշվում ներժանրային համամասնությամբ ու պարագրկում էին տարաժամը պատմություններ, որոնք այս կամ այն հատկանիշով առնչվում են առակի ժամանակակիցներին: Սա միևնույն

ժամանակ վկայում է առակի ժամրային որոշ հատկանիշների ընդհանրականության մասին, ինչը և բյուրընկալումների ու շփոթի տեղիք է տվել: Ուշարժանն այն է, որ առակն իր հերթին ներառվել է այլ ժամրերի նկարագրի մեջ՝ իբրև հավելյալ-լրացնող տարր, ընդորում՝ այդպիսի դեպքերում առակը գրեթե առանց բացառությունների ներկայանում է իր ժամրային ամբողջական նկարագրով:

Առակի ժամրային բնութագիրը կազմաբանող հատկականությունները երբեմն այնքան ընդհանրական են, որ միջնադարյան գրական ժամրային ըմբուլմներում տեղ են տվել տարբեր շատ ու շատ ժամրերի: Նույնիսկ ժամրի ամրագրման ժամանակաշրջանում՝ Մխիթար Գոշի ու Վարդան Այգեկցու առակների պարագային առակի ժամրանվան փոխարեն այլ փոփոխակներ են կիրառվել: Ներսես Շնորհալու հանելուկները բնորոշվել են «Առակք վասն ուրախութեան մարդկան»: Եվ, ընդհանրապես, միջնադարում առակ տարագումի ընդգրկումները շատ ավելի լայն են, քան այսօր: Նախկինում այն կիրառելի է եղել նաև խրատի, ասացվածքի, նմանաբերության, գրուցի, ընդհուաց՝ առասպելի ու հանելուկի պարագային:

Ժամրագիտակցության այսպիսի մակարդակի դեպքում այժմ նույնպես դժվար է միջնադարյան փոքրածավալ տեքստերից՝ առակներ, առածներ, ասացվածքներ, գրուցներ, հեքիաթներ, առասպելներ, խրատներ և այլն, հստակորեն զատորոշել, թե որոնք են առակները:

Խնդիրը բարդանում է այնքանով, որ վերը թվարկված գրեթե բոլոր փոքրածավալ ժամրերը անպայման ունեն գոնե մեկ հատկանիշ, որը ընդհանրական է: Ընդ որում՝ առակը ոչ միայն իր հատկականություններն է ցորում այլ՝ իբրև առակ հիշատակվող ժամրերի մեջ, այլև յուրովի հավաքագրում է դրանց օրինաչափությունները: Ասենք, առասպելի հետ նույնացվելու հիմքն այն է, որ առակը ևս իր բովանդակությամբ անիրական է ու փոխաբերական բնույթ ունի:

Հատկանշական է, որ բոլոր այդ դեպքերում բնորոշումներն ու սահմանումները հեռու չեն իրականությունից: Եվ հսկապես մնում է, որ ժամրը որոշարկելիս, փոքր ի շատե սահմանելիս, ելակետային դարձնել այն մտայնությունը, որ «սահմանարկու առանձնահատկություններից բացի, ժամրը կարող է ունենալ և ոչ պարտադիր երկրորդական հատկանիշ, որ առաջնային է այլ ժամրի համար և որը փոխում է տվյալ երկի դիմագիծը»:(1) Մանավանդ որ՝ ժամրերի զարգացման յուրահատկությունն այնպիսին է, որ որոշակի փուլում երկրորդական նշանակություն ունեցած կազմաբանական որևէ միավոր մեկ այլ փուլում դառնա ժամրը դիմորոշող էատարը:

Սա, մանավանդ, գործուն է առակի դեպքում, որն իր զարգացման ընթացքում երբեմն ստիպված է եղել Վերահմաստավորել ժանրը տարագող բնորոշումը:

Առակը, կարելի է ասել, իր զարգացման ընթացքում այդահիմի բարեշրջության է ենթարկվել: Ժանրի ժամանակակից գիտակցությունն ու սահմանները չափազանց նեղ են միջնադարյան ըմբռնումների համեմատությամբ: Մասմավորապես՝ Սողոմոնի առակներն ու «Յաճախապատում» ձաւերում հանդիպող առակները, որոնք, ի դեպ, տարագվում են «յայս առակս» ձևով, միջնադարյան մեկնություններում ներկայացվում են առավելապես խրատի, երբեմն նաև՝ առաջ-ասացվածքի, առասպելի, գրույցի, Ներսես Շնորհալու պարագային նաև՝ հանելուկի իմաստով:

Ժանրի հետագա ուսումնասիրողները ևս փորձել են ընդհանրացնել առակի ընդգրկումները: Թե՛ Նիկողայոս Մաօք՝ Վարդան Այգեկցու կազմած ժողովածուների առիթով, և թե՛ Մանուկ Աբեղյանը միջնադարյան առակագրության առիթով խոսելիս՝ հակված են այն կարծիքին, որ առակները տարաբնույթ պատմություններ են:(2) Արմենուիի Սրապյանը փորձում է այդ տարտղնվածությունը փոքր-ինչ համակարգել՝ կարելի է ասել՝ օգնության կանչելով առակ բարի մեկ այլ նշանակությունը, այն, որ առակ նշանակել է նաև օրինակ: «Օրինակ լինելու ուժով է,- գրում է նա, - որ ժանրային տարբեր նկարագիր ունեցող փոքրածավալ ստեղծագործությունները հավասարապես կոչվել են առակ»:(3)

Եվ ահա աստիճանաբար առակը թոթափում է օրինակի գործառույթը և հետզհետեւ ծեռք է բերում ժանրային այն հատկականությունները, որոնցով այսօր ըմբռնվում է ժանրագիտակցության ամենատարբեր մակարդակներում: Այս առումով պետք է առանձնացնել այլաբանության կամ այլաբերության գործոնը, որը դառնում է գերակայող ժանրի մյուս բնորոշիչների շարքում: Ընդ որում՝ սա այն երկրորդական հատկանիշներից է, որոնց մասին խոսում էինք Վերը: Աստիճանաբար առակի տարագման մեջ ժանրատարբերակից կարևորագույն հատկանիշ դարձավ այլաբերությունը կամ այլաբանությունը, և այս հատկանիշը, կայունանալով, նեղացրեց առակ ասվածի ըմբռնման շրջանակները և հանգեցրեց ներկա մակարդակին: Ավելին՝ ժանրի սահմանման մեջ սկսեցին հստակորեն սահմանազատվել նրա թե՝ գրական-գեղարվեստական առանձնահատկությունը, թե՝ գործառական-կիրառական սահմանները: Այս կերպ առակը ծեռք բերեց հստակ ու միագիծ բնավորություն: Ավելին՝ այլա-

բանության կամ այլաբերության ներդաշնակումը ժամրը տարորոշող նկարագրին հանգեցրեց այն բանին, որ առակ և այլաբանություն հասկացությունները նույնական կիրառություն ունեցան հաճախ: Սա մյուս կողմից առակի կառուցվածքին իրու բաղադրիչ նաևնավորություն պարտադրեց այլաբանության մեկնաբանությունը:

Այլաբանության առաջնայնությունը ժամրի դիմագծում ոչ միայն ամրագրում է ժամրը, այլև դրան հաղորդում է կառուցվածքային կայուն օրինաչափություններ և տարբեր այլ ժամրեր այսպես ասած՝ առակացնելու ունակություններ: Այլաբանությունը, բնականաբար, ենթադրում էր որոշակի բացատրություն: Վերջիններս ավելի շատ ներկայացվում էին բարոյախրատական համատեքստով: Աստիճանաբար բացատրությունը ևս դաշնում է պարտադիր առակի համար: Նիկողայոս Սառը Վարդան Այգեկցու ժողովածուների առիթով նկատում է, որ բազմաթիվ տարաբնույթ պատմությունների ու գրույցների, Վարդանի ժողովածուներում ներառվելու դիտավորությամբ, կցվել են բարոյախրատական մեկնություններ, և դրանք անխուսափելիորեն ձեռք են բերել առակի ժամրին բնորոշ ճանաչելիություն:

Առակների ժողովածուները կազմում էին հիմնականուն հիգնորականները և դա ևս իր ազդեցությունը թողել է առակի ժամրային օրինաչափությունների ծևավորման վրա: Յուրաքանչյուր դեպքում՝ առակի հմաստն ու ասելիքը մեկնաբանող բարոյախոսական հատվածին հիգնորականները հաղորդում էին կրոնական իմաստ: Դա երբեմն ուղղակի վերածվում է զավեշտի, քանզի ներկայացվող առակն ու նրան կցված բարոյախոսական մեկնությունը երբեմն հեռավոր իսկ կապ չունեն միմյանց հետ: Գրականագետ Մկրտիչ Մկրտչյանը երևույթը նկատել ու վերլուծել է «Իշո ծնաւ թոռն» առակի առիթով: (4)

Հաստատագրելով իր ժամրային օրինաչափությունները, առակն այնուհետև վերածվեց պահպանողական ժամրի և դարձավ վակ համակարգ, որը հակված չէ ենթատեսակների առաջացման և սահմանափակվում է սոսկ կենդանական ու բուսական աշխարհի այլաբանական պատկերման հետ: Այս կայուն գծերով հատկանշվում են Միսիթար Գոշի առակները:

Իբրև կառույց՝ առակը ենթադրում է փոքր ծավալ, սեղմ բովանդակություն, խրատական բնույթ, գեղարվեստական հորինվածք: Ընդհանրացնելով այդ օրինաչափությունները և ըստ այդմ՝ սահմանելով ժամրը, ընդունված է ծևակերպել, որ առակը որևէ գաղափար այլաբանությամբ հաստատող գեղարվեստական փոքրածավալ ստեղծա-

գործություն է: Այսուհանդերձ, մնալով փակ՝ իր հիմնական առանձնահատկություններով, առակի ներժանրային մի շարք հատկանիշներ որոշակի փոփոխությունների են ենթարկվել: Մասնավորություններից մի քանիսը ժամրի զարգացման հետագա փուլերում թուլանալու կամ ուժեղանալու միտում են դրսնորել: Առակը շարունակում է մնալ գրական-գեղարվեստական ժանր, պահպանում է իր փոքրածավալ բնույթը, սակայն միջնադարյան առակին բնորոշ արձակ տեքստը, ներկայում իր տեղը զիջել է տեքստի չափածո կերպին: Առակի խրատական ոգին, որ միջնադարում ժամրի տարտղնման պատճառներից մեկն էր, թուլացել է: Ներժանրային այդ մասնավորության փոխարեն առաջ է մղվել զվարձալի, երգիծական բնույթը: Խրատականը դրսնորվում է իբրև դրանց բաղադրիչ: Ժամրային այսպիսի կայուն հատկականություններով են բնորոշվում, օրինակ, Խաչատուր Աբովյանի «Պարապ Վախտի խաղալիք» ժողովածուում ընդգրկված առակները:

Բայց սա իր հետ բերեց մի շատ կարևոր հատկանիշ, որն ընդգծեց առակի ինքնատիպությունը: Խոսքը վերաբերում է հեղինակային անհատականության ընդգծված առկայությանը: Առակն ընկալվում է իբրև անհատական ստեղծագործություն և այս հանգամանքով էլ պայմանավորվում է ժամրի արտաքին կառուցվածքը: Եթե միջնադարում առակի գործառական-կիրառական բնույթը պահանջում էր քարոզվող նյութին ներձուլվելու հատուկ սկզբոնք, որով պայմանավորվում էր երեք մասերից բաղկացած կառույց՝ նախաբան կամ մուտք, բուն պատմություն և վերջաբան՝ մեկնություն կամ բարոյախոսություն, ապա ժամրի զարգացման ու պարզեցման ընթացքը հանգեցնում են այն բանին, որ մուտքը դառնում է ավելորդ: Առակն այժմ հատկական է կառույցի երկմասանոց բաղադրությամբ՝ բուն նյութ, որը հիմնականում այլաբանություն է և այն մեկնաբանող բարոյախոսություն: Այդպիսի կառուցվածքը ունեն Ավետիք Խահակյանի մի շարք առակներ, Հովհաննես Շիրազի գրած առակները: Ժամրի վերջնական, կայուն հատկանիշների ուսումնասիրնան առումով մեծ հետաքրքրություն են ներկայացնում նաև Արշավիր Ղարբնու առակները: Նրանից հետո, որոշ առակ գրող հեղինակների մոտ (Վարոս Հովհակիմյան, Ծմավոն Թորոսյան, Ռոբերտ Կարայան...) ժամրը վերածվում է մերկապարանոց դատողությունների ու շինօտի ընդհանրացումների հրավառության՝ սպանելով նրա բարոյախոս-կրթող ոգին:

## ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Արմենուիի Սրապյան, Առակ և զրոյց, «Հայ միջնադարյան գրականության ժամրեր», Երևան, 1984, էջ 305:
2. Տե՛ս Մանուկ Աբեղյան, Երկեր, հատոր Դ, Երևան, 1970, էջ 184:
3. Արմենուիի Սրապյան, Առակ և զրոյց, «Հայ միջնադարյան գրականության ժամրեր», Երևան, 1984, էջ 313:
- 4 Տե՛ս Մկրտիչ Մկրյան, Գրականության պատմության հարցեր, Երևան, 1982, էջ 75-76:

### ԱՍՓՈՓՈՒՄ

### ԱՌԱԿԻ ԺԱՆՐԱՅԻՆ ՅՈՒՐԱԿԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԶ ԱՐԹՍԵՆԻԿ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

Առակի ժամրը, ինչպես համաշխարհային, այնպես էլ հայ գրականության ու բանահյուսության մեջ՝ հին պատմություն ունի, անցել է զարգացման երկար ճանապարհ և դասվում է հնագույն ժանրերի շարքում: Առակի բուն ժանրագիտակցությունն ու ժանրային օրինաչափությունների որոշակիորեն համակարգված ըմբռնումն առկա է 10-12-րդ դարերում՝ հայ գրականության մեջ Վերածնության համարվող շրջանում: Հետագա շրջաններում ժամրը, իր կայուն հատկանիշներով հանդերձ, որոշակի փոփոխություններ է կրում: Հոդվածում ներկայացվում է առակի ժամրի ձևավորման և զարգացման ընթացքը՝ հայ գրականության տարբեր շրջափուլերում, ներկայացվում են ժանրային բնութագրերն ու տարաբնույթ ընկալումները:

### РЕЗЮМЕ

### ЖАНРОВЫЕ ОСОБЕННОСТИ БАСНИ В АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

### АРКМЕНИК НИКОГОСЯН

**Ключевые слова:** жанр басни, УНТ, путь развития, жанровые закономерности, оформление жанра, систематизированное понятие, периоды, устойчивые признаки, армянская литература.

Жанр басни, как во всемирной, так и в армянской

литературе и фольклоре, имеет древнюю историю, прошел длительный путь развития и относится к древнейшим жанрам. Жанроведение басни и систематизированное в определенной мере восприятие ее жанровых закономерностей наличествуют в 10-12вв., в период, считающийся в армянской литературе эпохой Возрождения. В дальнейшем жанр, при постоянстве своих признаков, претерпевает некоторые изменения.

В статье представлен процесс формирования и развития жанра басни в различные периоды армянской литературы, отражены ее жанровые характеристики и разноплановое восприятие.

## SUMMARY

### THE GENRE PECULIARITIES OF FABLE IN ARMENIAN LITERATURE ARQMENIK NIKOGHOSYAN

**Key words:** The genre of fable, folklore, development way, genre regularities, formation of genre, phases, lasting features, Armenian literature.

The genre of Brief Fable, as it is the case in the world literature, has a long history in Armenian literature as well and has gone a long way and is considered as one of the oldest genres. The systematized and clear perception of genre regularities and core genre awareness was discernible in 10-12 century Armenian literature – a phase considered as Renaissance of Armenian literature. In further periods the genre, with its lasting features, underwent some changes. The article deals with the process of formation and development of the genre of fable in different phases of Armenian literature, as well as presents genre characteristics and various perceptions and interpretations.